ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ

№2017-3-2-Ա

ք. Երևան 24.05.2017թ.

Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության աշխատակազմի մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) 2017 թվականի մայիսի 24-ի նիստում քննարկեց 2017 թվականի մայիսի 18-ին արտոնագրային հավատարմատար Վահագն Պետրոսյանի կողմից ներկայացված՝ SWATCH AG (SWATCH SA) (SWATCH LTD) (Jakob-Stämpfli-Strasse 94 CH-2502 Biel/Bienne) ընկերության «Tick different» (IR1280843) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Ապրանքային նշանի գրանցումը մերժվել է հետևյալ հիմքերով.

Հիմք ընդունելով Ապրանքային նշանների մասին ՀՀ Օրենքի 45-րդ հոդվածի 11-րդ մասը Գործակալությունը որոշում է՝ չեղյալ ճանաչել մերժման մասին որոշումը և ապրանքային նշանը գրանցել ապրանքների և/կամ ծառայությունների ստորև նշված մասի համար դաս 9. Օպտիկական սարքեր և գործիքներ, մասնավորապես՝ ակնոցներ, արևապաշտպան ակնոցներ, խոշորացույցներ. պատյաններ ակնոցների, արևապաշտպան ակնոցների, խոշորացույցների համար. մարտկոցներ ժամացույցների և այլ ժամանակաչափ սարքերի համար:

Հայտում նշված 09-րդ դասի մնացած բոլոր ապրանքների համար հայտարկված ապրանքային նշանը ենթակա չէ գրանցման, քանի որ «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի և 2-րդ մասի 1-ին կետի «բ» ենթակետի համաձայն գրանցման ենթակա չէ այն նիշը, որը նույնական կամ նման է ավելի վաղ ապրանքային նշանին, և դրանով մակնշվող ապրանքների և (կամ) ծառայությունների նույնական կամ նույնատիպ լինելը հանրության մոտ շփոթություն առաջացնելու վտանգ է պարունակում, ներառյալ՝ ավելի վաղ ապրանքային նշանին զուգորդվելը: Տվյալ դեպքում հայտարկված ապրանքային նշանը ենթակա չէ գրանցման, քանի որ այն շփոթելու աստիճան նման է Հայաստանի

Հանրապետությունում 09-րդ դասի ապրանքների համար միջազգային գրանցման հիման վրա պահպանվող «THINK DIFFERENT» (APPLE INC., 1 Infinite Loop, Cupertino, CA 95014, (US), IR 1210085) ապրանքային նշանին: ՀՀ կառավարության 2010 թվականի նոյեմբերի 18-ի N 1538-Ն որոշմամբ հաստատված «Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու և քննարկելու» կարգի 115- րդ կետի 1-ին ենթակետի, 117-րդ կետի 2-րդ, 5-րդ, 8-րդ և 9-րդ ենթակետերի համաձայն համեմատվեղ ապրանքային նշաններում շփոթության հարցը որոշվել է «Different» բառով և «THINK-Tick» բառերում նշանը կազմող մոտ և համընկնող հնչյունների մոտիկությունը, բաղաձայնների կազմի մոտիկությունը, նշանների համընկնող մասերի բնույթը, որտեղ «Tick-Think» բառերն ունեն իմաստային տարբերություն, սակայն հնչում են շփոթելու աստիճան նման, իսկ «Different» բառը համընկնում է:

Կոլեգիայի անդամը բողոքարկման խորհրդի քննարկմանը ներկայացրեց բողոքի նախնական քննարկման արդյունքները՝ բողոքը մերժելու և կրկնական փորձաքննության որոշումն ուժի մեջ թողնելու վերաբերյալ, քանի որ «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի և 2-րդ մասի 1-ին կետի «բ» ենթակետի համաձայն ներկայացված «Tick different» ապրանքային նշանը շփոթելու աստիճան նման է Հայաստանի Հանրապետությունում 09-րդ դասի ապրանքների համար միջազգային գրանցման հիման վրա պահպանվող «THINK DIFFERENT» (APPLE INC., 1 Infinite Loop, Cupertino, CA 95014, (US), IR 1210085) ապրանքային նշանին:

Բողոքարկողը արտահայտեց իր կարծիքը, որ ներկայացված ապրանքային նշանին կարելի է իրավական պահպանություն տրամադրել:

Փորձաքննության բաժնի պետը նշեց, որ որոշումն իրավաչափ է և ներկայացված ապրանքային նշանը ենթակա է մերժման:

Քննարկման արդյունքում համաձայնվելով կոլեգիայի նախնական կարծիքի հետ, և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2012 թվականի նոյեմբերի 8-ի N1501-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհրդում բողոքների քննարկման կարգի» 71-րդ կետի 3-րդ ենթակետի դրույթներով՝ բողոքարկման խորհուրդը.

Ո Ր Ո Շ Ե Ց

Մերժել արտոնագրային հավատարմատար Վահագն Պետրոսյանի կողմից ներկայացված՝ «Tick different» (IR1280843) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը և կրկնական փորձաքննության որոշումը թողնել ուժի մեջ:

Բողոքարկման խորհրդի որոշումը կարող է վիճարկվել դատական կարգով ՀՀ վարչական դատարանում՝ դրա ստացման օրվանից վեցամսյա ժամկետում:

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՆԱԽԱԳԱՀ ԳԱՐԵԳԻՆ ՄԵԼՔՈՆՅԱՆ